ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«04» մայիսի 2018 թվականի № 46-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի մարտի 27-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 26 և 2018 թվականի հունվարի 23-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 75 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի ապրիլի 3-ի թիվ Ֆ-111/18 գրությունը, «ՌԱՖԱՐՇԻՆ» ՍՊ ընկերության 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 07/12 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՌԱՖԱՐՇԻՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/580 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Հերհերի հրաբխային ավազների հանքավայրի 1.X=4407340.0 Y=8544400.0, 2.X=4407511.0 Y=8544475.0, 3. X=4407678.0 Y=8544325.0, 4. X=4407767.0 Y=8544448.0, 5.X=4407503.0 Y=8544675.0, 6.X=4407418.0 Y=8544613.0, 7.X=4407433.0 Y=8544543.0, 8.X=4407268.0, Y=8544503.0 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 515000 մ^3 հրաբխային ավազի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-580 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4407340.0 Y=8544400.0 H=2052.0 (h=0), 2. X=4407511.0 Y=8544475.0, H=2072.0 (h=0), 3.X=4407680.0 Y=8544313.0, H=2118.0 (h=-3), 4.X=4407707.0 Y=8544357.0, H=2118.0 (h=-3), 5.X=4407731.0 Y=8544364.0, H=2120.0 (h=-5), 6.X=4407733.0 Y=8544378.0, H=2118.0 (h=-3), 7.X=4407743.0

Y=8544382.0, H=2118.0 (h=-3), 8.X=4407767.0 Y=8544448.0, H=2116.0 (h=0), 9.X=4407503.0 Y=8544675.0, H=2061.5 (h=0), 10.X=4407418.0 Y=8544613.0, H=2040.0 (h=0), 11.X=4407433.0 Y=8544543.0, H=2052.0 (h=0), 12.X=4407268.0 Y=8544503.0, H=2043.0 (h=0), 13.X=4407232.0 Y=8544500.0, H=2043.0 (h=0), 14.X=4407232.0 Y=8544485.0, H=2045.5 (h=-0.5), 15.X=4407240.0 Y=8544476.0, H=2047.0 (h=-2), 16.X=4407268.0 Y=8544478.0, H=2048.0 (h=-3), 17.X=4407268.0 Y=8544493.0, H=2045.5 (h=0), 18.X=4407276.0 Y=8544492.0 H=2045.0 (h=0), 19.X=4407340.0 Y=8544400.0 H=2052.0 (h=0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 7.5 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 10000 մ^3 հրաբխային ավազի պաշար:

3.Կնքել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-580 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Հերհերի հրաբխային ավազի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ-580 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ